

Առօրոց

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր ԷԼ ՏՈՐԷՆԻ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 17

ԳԻՆ 100 ՓՐ.

19 ՅՈՒՆԻՍ 1920



Ա. ՅՍՕՐ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՐԱՆԻ ԿՐԹԱՆՈՒՆԻ
ՆԱԽԱՐԱՐԱՆԻ ԿՐԹԱՆՈՒՆԻ
ՈՐԲ ՄԸ ՓՐԿՈՂԸ



Վ. Ա. ՂԸ

ԸՆԴՀ. ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ ՕՐ 27 ՅՈՒՆԻՍ 1920

ՀԱՅ ՈՐԲԻԿԸ

Այսօր տրկար, տառապած,
Մարմնացու՛մը զրկանքի,
Ոտքը բուպիկ, գլուխը բաց,
Կ'ըմպէ լեղին որը կեանքի:

Վաղը ուժեղ, զարգացած՝

Հերոս գործի ու ջանքի,
Ճակատն օրհնեալ քիրտով թաց՝
Իր հողին տէ՛ր վեհոգի:

Հայ աղբերջա՛ն, գանձըդ բա՛ց,
Եւ տո՛ւր որ Հայ որբն աճի,
Որբին, այրւոյն հայրն Աստուած
Բարի գործէդ թո՛ղ հաճի:

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ



ՏԲԹ. ՏԻԳՐԱՆ ԽԱՉԵՐԵԱՆ

Մասնագէտ ներքին, ջղային

եւ ջղայոց հիւանդութեանց
Գումգարու, Զիֆթէ Կէլին, դեղ. Ա. Ս.
Արսէնեան, թիւ 118 եւ Կէտէկ Փաշա
Նէվիէ ճատտէ, թիւ 73

Կատարեալ յաջողութեամբ կը դարմանէ
ստամոքսի, աղիքներու, սրտի եւ թո-
քերու հիւանդութիւնները, երկարամեայ
փորձառութեամբ եւ խոր ուսումնասի-
րութեամբ հնարած է մասնաւոր դար-
մանում մը ջղային տկարութեան, լուս-
նոտութեան (սարա) եւ գլխացաւի. Հիմ-
նական դարմանում բոլոր ջղային հի-
ւանդութեանց. Կենսաբանական վերջին
տուիքներու համաձայն կ'արգիլէ ժա-
մանակէ առաջ ծերանալը եւ կը բուժէ
անոր հետեւանքները եղող անկարողու-
թիւնը, ընդհանուր տկարութիւնը եւ ին-
կածութիւնը. Առողջական վիճակի ման-
րագնին ըննութեամբ ապագայ հաւա-
նական ծանր հիւանդութեանց առաջըր
կ'առնէ. Հիւանդագին եւ փափկակազս
տղաքներու առողջական վատթար վի-
վիճակը կը բարեփոխէ.

Ժամադրութիւնները յարգելու համար

գ ո Ր ծ ա ծ է

OMEGA (ՕՄԵԿԱ)

ԺԱՄԱՅՈՅՅԸ

Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն

ՇԷՔԷՐԵԱՆ

Զարմաբերլար, Սեպուհեան խան, թ. 40

ՏԲԹ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պայազիտ, Մաքաւնըլար, թիւ 5

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

ՏԲԹ. ԵԴ. ՄՈՒՐԱՏԵԱՆ եւ

ՏԲԹ. Կ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ

Ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պոլիս, Նոր Նամակատան կից Նիւզհէթ
Զիա դեղարանին վերնայարկը.

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ԵՒ ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆՑ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՍԱՀԱԿ ՍՎԱՃԵԱՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ԲԱԼՓԱՔՃԻՆԵՐՈՒ ՃԱՏՏԷՆ
ՔԻՒՐՔՃԻՆԵՐՈՒ ԴՐԱՆ ՃԻՇՏ ԴԷՄԸ Թ. 2

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Ճաշակի տէր
տիկիններու եւ օրիորդներու ի գիտու-
թեան կը հաղորդենք թէ Տիար Սահակ
Սվաճեան Եւրոպայէն բերել տուած է
մեքենայ մը որով ամէն տեխակ կեր-
պասներու վրայ վերջին ձեւով եւ հա-
մաշափօրէն ֆիլիսէ, ագօրտ կը կոտ-
րուի. Առիթէն պէտք է օգտուիլ.

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան

նախանձախնդիր անձերուն

ՏԲԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ՐԷԻՍԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Պոլիս, Նոր Նամակատան կից, Նիւզհէթ
պէյի դեղարանը, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակռաներու հիւանդութիւններ. կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբաճաշակ ատամնաշարեր. գոլթօններ,
պոլիչներ եւ բիլօններ.

ԿԱՏԱՐԵԱԼ ՃՇԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏԲԹ. ՏԻԳՐ. ԵՂԻԿԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Օրխան պէյ խան
թիւ 22

Գիտական խնամք եւ գեղարուեստակա-
ամենանուրբ ճաշակ, կատարեալ ճշդան
պահութիւն եւ մաքրութիւն.

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Կեդրոն Պահնէ Գաբու: Մէյվախօս Խան—Հեռաձայն Սթամպուլ 319

ԽՄԲԱԳԻՄԱՆՆ

ԱՐԴԻՒՆԱԽՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Սիրելի փոքրիկներս,

Անցած շաբթու բացատրել ջանացի թէ՛ ի՞նչպէս մարդ աշխատութեան համար յարմարեցուած և ստեղծուած արարած մըն է, ու աշխատութիւնը մեծ բարիք մըն է իրեն համար թէ՛ ինչ է աշխատասիրութիւնը, որուն արդիւնաւորման համար կամք և յօժարութիւն անմիջական է. թէ երբ կ'աշխատինք և արդիւնաւոր ու գովելի գործեր յառաջ կը բերենք բարոյապէս իրաւունք մը շահած կ'ըլլանք հանգչելու և կազդուրուելու, ինչ որ ընել պիտի փորձէք ձեր ամառնային յառաջիկայ պաշտպութեան: Նոյն ատեն ակնարկելով ձեր քննութիւններուն, որոնք փորձաքարը պիտի ըլլան ձեր աշխատասիրութեան, խոստացած էի ընել կարգ մը թելադրութիւններ, որոնք կը կարծէի թէ օգտակար պիտի ըլլային արդիւնաւորելու համար ձեր աշխատասիրութիւնը: Ուրովհետեւ այդ կերպով միայն ձեր աշխատութիւնները պիտի ըլլան արդիւնաւոր աշխատութիւն:

Այո՛, շատ աղէկ գիտէք թէ ամէն բանի մէջ վախճանական նպատակ մը կայ, և այդ իսկ պատճառաւ աշխատութիւնն ալ նպատակի մը համար է: Աշխատութեան համար ալ իբրեւ գլխաւոր նպատակ կարելի է ցուցնել անոր արդիւնաւորութիւնը կամ օգտակարութիւնը: Անօգուտ և ապարդիւն աշխատութեան համար ժողովրդական ոճով մը խօսելով «սանդի մէջ ջուրը ծեծել» կ'ըրոն: Ի՞նչ օգուտ յառաջ կուգայ ջուրը սանդի մէջ ծեծելէն: Ձեզի ծիծաղելի թող չի դայ. մարդոցմէ ոմանց աշխատութիւններն ալ ահա այդպէս են. այսինքն բոլորովին անօգուտ ու ապարդիւն: Ձի մոռնամ սակայն աւելցնել թէ, ոմանց աշխատութիւնն ալ ապարդիւն ըլլալէ աւելի գէշ, այսինքն վնասակար են: Բայց քանի որ ամէնս պիտի փափաքէինք որ մեր աշխատութիւնները արդիւնաւոր ըլլան ու օգտակար, այս անգամ, խոստումիս համաձայն թելադրեմ քանի մը կերպեր, որոնք կը յուսամ թէ օգտակար պիտի ըլլան ձեր աշխատութիւնները արդիւնաւորելու տեսակէտով:

Նախ՝ աշխատեալով առաւելան սիրէ: Արդէն ձեզ խօսեցայ բուն աշխատասիրութեան, ու անոր մէջ կամքի ու յօժարութեան կարեւոր դերին մասին: Բայց մենք յօժարութեամբ աշխատելու համար մեր աշխատութեան առարկան սիրելու ենք: Դուք ձեր փորձովն իսկ չէք գիտեր թէ աւելի դիւրաւ ու աղէկ կը սորվիք ձեր այն դասը որ շատ կը տօնիրէք: Ընդհակառակը ձեզ անհաճոյ կամ անսիրելի դաս մը կրկնապա-

տիկ ջանքով ու աշխատութեամբ իսկ շատ դժուարութեամբ կրնաք սորվիլ : Այդպէս է նաեւ ամէն տեսակ աշխատութեանց համար : Ուրեմն, նախ ջանացէք սիրել ձեր աշխատութեան առարկան : Երաժշտութեան համար սէր ունեցող մէկու մը այնչափ անտանելի չեն երկար, երկար վարժութիւններ ու փորձեր : Եւ այդ երկար ու համբերատար աշխատութեամբ միայն կարելի կ'ըլլայ յառաջ բերել յաջող երաժշտագէտը : Կը տեսնէք թէ ձեր ծնողքը և ուսուցիչները ի զուր տեղը չէ որ կը ճգնին ձեզ ներշնչել ուսման սէրը :

Երկրորդ, գիտակցութիւն դիւ աշխատութեանդ մէջ : Այսինքն գիտցիր թէ ինչո՞ւ համար ստանձնած ես այն աշխատութիւնը, զոր կը կատարես : Մեքենաբար և անգիտակցաբար կատարուած աշխատութիւնները, բնականաբար ուղուածին չափ արդիւնաւոր և օգտակար չեն կրնար ըլլալ : Հոն կամքի և կորովի մղիչ ուժը կը պակսի : Երբ, զոր օրինակ, գիտակից չես թէ ուսողութեան դժուարին ու յաճախ տաղտկալի խընդիրներով և վարժութիւններով ի՞նչ մեծ մարզանք ընել կուտաս քու միտքիդ, ի՞նչպէս կը զօրացնես տրամաբանելու կարողութիւնդ, տարակոյս չկայ թէ շատ շուտ պիտի ձանձրանաս այն դասէն : Բնական գիտութիւններ ուսանելու քու պէտքդ գիտակցաբար զգալով է որ աւելի յաջող պիտի ըլլաս ուսման այդ ճիւղին մէջ : Եւ այսպէս ամէն աշխատութեան մէջ : Կ'ուզեմ նաեւ շեշտել թէ այս գիտակցութեան ոգին ալ աւելի սէր կը ներշնչէ մեզ դէպի մեր աշխատութեան առարկաները, և այն ատեն կ'ըլլանք գիտակից աշխատասէրներ :

Երրորդ, մեթո՞ս եւ կարգ ու կանոն դիւ աշխատութեանդ մէջ : Կարծեմ ամէնդ ալ կ'ընդունիք թէ այս շատ կարեւոր պայման մըն է արդիւնաւոր աշխատութեան համար : Աշխարհիս մէջ ամէն բան իր կերպը ունի. ամէն գործ իր մասնաւոր եղանակը ունի : Աշխատիլ գիտնալն ալ գիտութիւն մըն է, ու այդ գիտութիւնը սորվիլ կարեւոր է ամէն մարդու, իբրեւ աշխատութեան համար ստեղծուած էակ : Ուսանողի մը համար ալ այս ճշմարտութիւնը կարեւոր ըլլալէ չի դադրիր : Ձեզմէ շատեր, հակառակ ձեր չարաչար աշխատութեան նուազ արդիւնք յառաջ կը բերէք, պարզապէս անոր համար որ աշխատելու կերպը չէք գիտեր, արդիւնաւոր աշխատութեան մեթոտներուն չէք վարժուած, և կարգ ու կանոն չէք դնել ձեր աշխատութեանց մէջ : Մասնաւանդ այս քննութեան օրերու մէջ, յաջող քննութիւններ տալու բուն փափաքով մը, հապճեպ ու արագ ջանքերով կը նկրտիք ձեր լաւագոյնը ընել : Սակայն, քիչ մը աւելի զոչուշութիւն ձեր աշխատութեան եղանակին մասին շատ աւելի արդիւնք պիտի տայ ձեր օգտին համար : Այս առթիւ ալ աշխատութեան քանակէն աւելի որակն է որ յաջողութիւնը կ'երաշխաւորէ : Այո՛, աշխատութիւնը, բայց մասնաւանդ, կանոնաւոր, մեթոտաւոր աշխատութիւնը ամէն բանի կը յաղթէ : Հետեւաբար, որչափ բարձրանայ աշխատութեան տեսակը, այնչափ պէտք է մեթոտա-

Լոր ըլլայ աշխատութիւնը : Ամէնէն սովորական և պարզ աշխատութեանց մէջ իսկ մեթոտը անհրաժեշտ է արդիւնաւորութեան տեսակէտով :

Ուստի այս անգամուան համար պիտի փափաքէի որ աղէկ մը տպաւորէիք ձեր միտքերուն մէջ այս երեք թելադրութիւնները . — Աշխատութեան առարկան սիրել, գիտակցութիւն դնել աշխատութեան մեջ, մեքոս եւ կարգ ու կանոն դնել աշխատութեան մեջ:

Գ Ա Ն Գ Ա Տ

Զմեռն երբ որ արթննամ՝

Գիշեր կ'ըլլայ դեռ,

Մոմի լոյսով կը փութամ

Հագնիլ իմ լաթեր,

Բայց երբոր գան ամառուան

Նրկար սափ օրեր,

Պառկիլ կ'երթամ ննջարան

Իրիկուն չեղած դեռ:

Նրբ կը մսնեմ անկողին՝

Կը սեսնեմ սիրուն

Թռչուններ դեռ կը թռչին

Վրայ ծառերուն .

Ու կը լքեմ որ մարդիկ,

Մեջ փողոցներուն

Կը փախն դեռ հանդարտիկ,

Կ'երթան իրենց տուն:

Զե՛ք դժարիւր, դուք ըլլաք,

Ինձ քեք, խնդրեմ,

Մինչ երկինք ջինջ կապուտակ՝

Կը ժպտի ձեր դէմ,

Ու երբ կ'աւզեք դեռ խաղալ

Ցասկել հրնուագին՝

Ըսին. «Ժամ է, մըսիր ա՛լ

Քուկին անկողին:»

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ


ՏՈՔԹ. Յ. ԵԼՐԱՆՈՍԵԱՆ

Մասնագէտ

Ներքին եւ կանանց հիւանդութեանց

Մանկաբարձ

Գումգաբու Ամերիկեան Դեղարանի կից



Ա Ռ Ա Կ Ա Ն Ի

Ինչ կը բրդես՝ ան կուգայ դգալդ,

Երբ ծուռ կրթես՝ կը տուծես սիւալդ:



Ինք իր շուքէն կը վախնայ՝

Վախկոտին շատ պատճառ կայ:



Ինտոր ձեռք՝ անանկ ձեռնոց,

Ինտոր խելք՝ անանկ ալ գործ:



Ինքը քուն, բախտն արթուն,

Երանի՛ այն մարդուն:



Ինչ որ Պետիկ չի սորվեցալ՝

Պետրոս չի սորվիր:

Ինչ որ տղուն օգուտ չըրաւ

Մարդուն է նանիր:



Իրեն այգին է ձգեր՝

Ուրիշինը կը ջըրէ,

Է՛հ, այս տեսակ ալ խենդեր

Այս աշխարհ շատ տեսեր է:



Ինձի խեղդող ջուրին ծով կ'ըսեմ,

Զիս կործանող շունչին հով կ'ըսեմ:



Ինչուան հաստը բարկընայ՝

Բարակին հոգին կ'ելլայ:

Ինչուան ջուրը առու գայ

Գորտին աչքը դուրս կ'իյնայ:

Ա.Ռ.Ա.ԿԱՆԻՍԻ

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ

Ե.

ՍԵՐՄ ԿԱՄ ՀՈՒՆՏ

Արդէն գիտէք թէ որ և է սերմի կամ հունտի մէջ զայն արտադրող բոյսը կամ տունկը պահուած կայ ու կը մնայ, մինչեւ որ նպաստաւոր պայմաններ երեւան բերեն զայն: Հետեւաբար սերմը կամ հունտը բոյսին սկիզբն է. ճշմարիտ է որ բուսական կեանքի շրջանը-սերմէն դէպի սերմ է:

Փոքրիկ սերմը կը նմանի փոքրիկ մանկիկի մը և բոյսը որուն վրայ կ'աճի սերմը՝ մայրն է աւնոր: Բոյսը այդ սերմիկին խնամ կը տանի, կը սնուցանէ զայն ու բնակարան մը՝ կուտայ անոր՝ մէջը աճելու համար: Ահա այդ բնակարանը կամ տունը, ինչպէս ըսի նախորդ դասով, պսւղն է:

Սերմիկը ու անոր բնակարան պտուղը իրար չեն կրնար սնուցանել: Այդ գործը կը կատարէ մայր-տունկը որ իր արմատներով՝ հողէն և տերեւներով՝ օդէն սնունդ կ'առնէ:

Երբ սերմը բարեբեր հողի մէջ իյնայ և օդը նպաստաւոր ըլլայ, անկէ կը բուսնի փոքրիկ բոյս մը, որ հողին մէջ արմատները, և օդին մէջ ուտերը կը տարածէ և ինքզինքը գեղեցիկ տերեւներով կը զգեստաւորէ: Ահա այս կերպով փոքրիկ սերմը իր կարգին աղուոր և գեղեցիկ տունկ մը կ'ըլլայ:

Այդ բոյսը կամ տունկը կը մեծնայ ու կը զօրանայ և վերջապէս ծաղիկներ կը բանայ: Եթէ իր բոլոր ծաղիկները որձաններ

ունին և իգաներ չունին՝ պտուղ չեն կրնար տալ: Բայց եթէ իր ծաղիկներէն մէկը իգաներ ալ ունի՝ պտուղ կրնայ տալ: Իգայ եղած տեղն է որ սերմը կը գրանուի, և այդ սերմերուն հետ պտուղ յառաջ կուգայ:

Ահա այս երջան մըն է. — Տունկ մը կ'աճի, ծաղիկ, պտուղ և սերմ կուտայ: Խնձորի սերմէ մը խնձորենի յառաջ կուգայ: Նարինջի սերմէ մը՝ նարնջենի մը կ'աճի: Վարդի սերմէ մըն ալ թուփ մը կը բուսնի: Տորենահատիկէ մը երկար աղուոր խոտ մը կը բուսնի, և այդ օրհնուած ցորենարոյնն է: Այսպէս է ամէն տունկի համար: Իւրաքանչիւրը իր տեսակին սերմը կ'արտադրէ, և այս սերմերը իրենց տեսակին բոյսերը կը բուսցնեն:

Սերմերու ձեւերը. — Սերմերն ալ, ծաղիկներու պէս, շատ ձեւերով կ'ըլլան: Բայց ծաղիկին ու պտուղին պէս սերմն ալ տեսակ մը կ'ընտանեցնուի մեծի: Շատ մը սերմեր սիսեռին պէս կ'ընտանեն: Ուրիշ խոտեր և բոյսեր կան, որոնք շատ փոքր, կ'ընտանեն սերմեր ունին, աւաղահատիկէ մը հազիւ թէ մեծ: Զուածեւ սերմեր ալ կան, ինչպէս լուբիան: Բարակ և տափարակ սերմեր ևս կան, ինչպէս ձմերուկին և սեխին կամ զգումին սերմերը կամ կուտերը: Սերմերէն ոմանք ալ կապուղ, մետաքսանման փետրիկներու պէս են, երբ պտուղէն բաժնուին՝ հեռուները կը թռչին օդին մէջ:

Հող չէ թէ որչափ փոքր կամ մեծ ըլլայ սերմ մը, կամ ինչ ձև

այ ունենայ, անոր կոկիկ ծածկոյթին տակը փոքրիկ բոյսիկը կը քնանայ: Կրնայ շատ փոքրիկ ըլլալ, բայց հոն է ան: Ահա այդ սերմը երբ աղէկ հողի մէջ իյնայ, ջուր, ջերմութիւն և լոյս դան անոր, այն ատեն այդ սերմը կը բացուի, կը ծլի: Այդ ծիլը փոքրիկ բոյսն է որ կը քնանար այդ սերմին մէջ: Ան աճելով կ'ունենայ արմատ, ցողուն կամ բուն, ոտ ու տերև:

Յորդոր.— Բոյսերու մասին այս յաջորդական դասերը տալով ուրիշ նպատակ չունիմ, եթէ ոչ ձեր աչքերը բանալ Մայր-Բնութեան հրաշալիքներուն առջև: Կեանքը, որ և է ձեւի ալ տակը ըլլայ ինքնին հրաշք մըն է: Կենդանական, մարդկային և ուրիշ կեանքերու պէս բուսական կեանքն ալ իր գաղտնիքներով ու սքանչելիքներով հրաշապատում մատեն մըն է: Կարդացէք, սորվեցէք, սիրեցէք զայն, ընթերցողներ, և վստահ եղէք թէ պարապի չպիտի երթան ձեր աշխատութիւնները: Պիտի օգտուիք, պիտի զարգանաք և օրէ օր, տարիէ տարի աւելի պիտի մօտենաք Կեանքի Աղբիւրին, այս հրաշալի տիեզերքի Ստեղծողին, որուն մէջ սքանչելի ձեռագերծն էք դուք, որ կը փառաւորէք իր անունը:

Ամփոփեց

ԳՐ. Հ. ԴԱԼՈՒՍՏԵԱՆ

ՀԱՅԿ ՄԱՀԱՅՁԱՃԵԱՆ

ՄԱՔՍՍՅՈՒՆ ՅԱՆՉՆԱԿԱՏԱՐ

Ներածում եւ արտածում

Կը գնէ նաեւ «սթօր» տպրանքներ
Մահմուտ Փաշա, Քամանթօ խան, թիւ 23

ՆՈՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՄՕՐ ՄԸ ՆԱՄԱԿԸ

Երեկոյեան մութ ստուերները ծածկեր էին բլուրներու գագաթը թռթռացող լուրթ կապոյտ մշուշը, և հորիզոնին վրայ բարձրացեր էր հրեղէն լուսինը որ իր ցոլքերը կը տարածէր դէպի անհուն տարածութիւնն ու երկնակամարը:

Այս պահուն մայր մը իր վերջին վայրկեանին նամակ մը կը գրէր իր անդրանիկ զաւկին որ ծտարիէ ի վեր պանդուխտ էր օտար միջնորդներու տակ:

«Եկո՛ւր սիրելի որդեակս՝

Այսքան երկար տարիներ սպասելէ յետոյ. Ամպի մէգին մէջ փաթթուած եմ, դէմքս կնճռոտ, կուրծքս հովերուն տակ հեծեծելով շնչապառ կը հեռանամ կեանքէն, բաժնուելով սիրելիներէս իսպառ:

Որդե՛ակս, կը կանչեմ, կը կանչեմ քեզ, դէմքս դեղնած է ու մարելու մօտ են իր սուր ճանչները, մարմինս խանձած կմախք մ'է դարձեր և իմ կեանքիս թելերը փրթելու մօտ են. քու ցաւատանչ պանդխտութիւնդ մաշեցուց մայրդ.

Եկուր ուրեմն՝ առ մայրական գուրգուրոտ սէրս ու վերջին գրկահամբոյրս որ պիտի թաղուի քու ամբիծ մարմնոյդ մէջ: Գիտե՞ս սիրելի զաւակս, ալեւորի մը կեանքն ու օրերը կը վազեն հեւի հեւ արծիւներու պէս հոլաթեւ դէպի հանգրուանը կեանքին:

Իսկ եթէ զիս մեռած գտնես վերադարձիդ համբուրէ և կրկին համբուրէ իմ հողամարմինս և ընծայէ կաթիլ մը ջուր քու բերնէդ որով թերեւս քիչ մը զգլանամ, և հանգչի ոսկորակոյտս:»

ԱՂԱԽՆԻ Յ. ԱՐԹԻՆԵԱՆ

Քեօքանիա,

ԲՆԱԽՈՍԱԿԱՆ

Ա Կ Ռ Ա Յ

ԵՒ ԱՆՈՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆՐ



ԱԿՌԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ա. Հերձատամներ (incisives), կը գտնուին կզակի առջեւի մասին վրայ, թիւով 8 հատ են, որոնց 4ը վարի ծնօտին և 4ը վերինին վրայ կը գտնուին. այս 4 հերձատամները դիրքին համեմատ կը բաժնուին 2ի: Առաջինը որ կը գտնուի միջնակայ գիծին անմիջապէս քովը, կը կոչուի կեդրոնական հերձատամ (incisive central) աջ կամ ձախ՝ ըստ կողմին: Երկրորդը կը հետեւի նախկին կարգին և կը կոչուի incisive latérale, նոյնպէս աջ կամ ձախ, իսկ չորրորդը միեւնոյն ատեն վերի կամ վարի կզակին վրայ գտնուելու պարագային կը կոչուին վերին կեդրոնական հերձատամ, և ըն. այսպէս:

վերին կեդր. աջ հերձատամ:
(Incisive central supérieur droite)

»	»	»	gauche
»	»	inf.	droite
»	»	»	gauche

կողմնական հերձատան վերին աջ:

»	latérale	»	droite
»	»	»	gauche
»	»	»	droite
»	»	»	gauche

Բոլոր այս հերձատամներուն բերանները մկրատի մը շեղփին նման սուր են և կը կոչուին հատու ծայրեր *bords tranchant*.

Ընդհանրապէս վերի հերձատամները աւելի դուրս են չարուած քան վարինները, այնպէս մը որ երբ կզակնիս գոցելու ըլ-

լանք վարի հերձատամներու *bord tranchant*ները վերիններուն ծայրերուն քուելով կ'անցնին սոյն վերջիններուն հետեւը ճիշդ մկրատի մը երկու շեղփերուն նման, և անոր պէս կը ծառայեն սննդանիւթը կտրելու:

Բ. Շնատամներ (*canine ou cuspide*) կը յաջորդեն հերձատամներու, թիւով ընդամէնը 4 հատ են և իրենց տեղին համեմատ կը կոչուին վերի, վարի, աջ կամ ձախ շնատամ: Ասոնք ալ ընդհանուր գիծերու մէջ կը նմանին հերձատամներու, միայն սա տարբերութեամբ որ ասոնց վերի եղերքը սուր անկիւն մը կը ձեւացնէ. կարծես հերձատամի մը աջ ու ձախ անկիւնները կտրուած ըլլային: Ասոնց պաշտօնն է սրննդանիւթը պատուել:

Գ. Փոքր աղօրիքը թիւով 8 հատ են. 4ը վերի կզակին վրայ 2 առ 2 աջ ու ձախ կողմերը կը գտնուին և 4ն ալ վարի կզակին վրայ միեւնոյն ձեւով բաժնուած, ըստ կարգի և տեղի կը կոչուին առաջին կամ երկրորդ վերի աջ կամ ձախ նախաղօրիք *prémolaires* կամ փոքր աղօրիք *petite molaire*, կամ երկծայր *picuspide*.

Վերջին անունէն ինչպէս կ'երեւի, սոյն ահւան ունի երկու ուռուցիկ սրածայր անկիւններ, կարծես երկու շնատամներ իրարու միացած են քիմքերեսի *face-palatin*ի կողմէն: Իրենց պաշտօնն է կտրուած ու կտտրուած սննդանիւթը աւելի եւս մանրել. ասոնց վերիններուն առաջինները ունին երկերկու արմատ, իսկ երկրորդինները մէկ.

իսկ վարինները արտաքին տես-
քով առ հասարակ մէկ արմատ
կ'ունենան :

Գ. Մեծ աղօրիք (grosses mol-
laires).— Մեծ աղօրիք կոչուած
ակռաները հաստ ու խորանարդա-
ձև տեսք մը ունին, իրենց ծա-
մելիք կողմը կրներկայացնէ խորտ
ու բորտ մակերես մը, գոյացած
4—5 փշիկներու (tupercule ou
cuspidé և ասոնցմէ բնականօրէն
յառաջ եկած խոռոչներու պատ-
ճառաւ : Իրենց պաշտօնն է փոքր
աղօրիներու տակ մի քիչ ձգմուած
նիւթը լաւ մը մանրել և լեզուի
օգնութեամբ ու թուքի միջոցաւ
զայն վերածել համասեռ ու կա-
կուղ խմորի մը՝ պատրաստ կուլ
տրուելու : Սոյն ակռաները թիւով
12 հատ են մէն մի կողմին վրայ
Յական հատ գտնուելու պայմա-
նաւ և ըստ կարգի կը կոչուին
Ա. Բ. Գ. grosse mollaie, ասոնց
արմատները սովորաբար կ'ըլլան
երեք՝ եթէ վերի կզակին վրայ
են, իսկ երկու՝ (արտաքին երե-
ւոյթով) եթէ վարի կզակին վրայ :
Միայն թէ Գ.ները բացառութիւն
կազմելով Յէն շատ աւելի կամ
պակաս արմատներ կ'ունենան .
ասոնց մասին քիչ վերջը պիտի
խօսիմ առանձին կերպով :

Սռաջին մեծ աղօրին կը բուս-
նի երբ տղան թեւակոխած է 6րդ
տարին, ուրկէ կը կոչուի նաև
dent de six ans. Բ.ը երբ 12 տա-
րեկան է, dent de douze ans.
Իսկ Գ.ը երբ տղան չափահաս է
18—20 տարեկանին և կը կոչուի
dent de vingt ans կամ dent de
sagesse.

Ատամանց ձեւերու ու քանա-

կին մասին այսքան մը ծանօթու-
թիւն տալէ վերջ, անցնինք ա-
սոնց բնախօսական կազմին և ա-
նոր յարակից երեւոյթներուն ու-
սումնասիրութեան :

(Ատամ նաբոյժ)

ՄԱՐՏԻԿ ՐԷԻՍԵԱՆ

Թ Է Ի՞Ն ՉՊԷՍ

ՓՈՔՐԻԿ ՀՈՎԻԻՐ

ՄԵԾ ՀՈՎՈՒՍՊԵՏ ԵՂԱԻ

Իտալիոյ մէջ 1531 տարուոյ
Փետրուար ամսոյ սկիզբներն էր :

Փրանկիսկեան կրօնաւորներու
կարգէն կրօնաւոր մը կը ճամբոր-
դէր դաշտերու մէջէն : Կը թուէր
թէ ճամբան կորսնցուցած էր, ո-
րովհետեւ յանկարծ կանգ առնե-
լով ծառաստանի մը տակ, սկսաւ
այս կամ այն կողմը դարձնել
գլուխը՝ ճամբան ճշդելու համար :

Հոն մօտը կը գտնուէր փոք-
րիկ հովիւ մը, գրեթէ տասներ-
կու տարեկան, որ կ'զբաղէր ցուպ
մը տաշելու, իր խոզերեմակը ա-
րածած միջոցին :

Կրօնաւորը նշանացի կերպով
իր քովը կանչեց զայն : Տղան
գլխարկը ձեռքը բռնած ածապա-
րեց անոր մօտ :

«— Կրնա՞ս ինծի ցուցնել Ա.ս-
քօլիի ճամբան, հարցուց ուղե-
ւորը :

— Կը հեռանաք անկէ, հա՛յր,
պատասխանեց տղան, եթէ կը
հաճիք՝ կրնամ ընկերանալ ձեզ,
մինչեւ որ ուղիղ ճամբան հաս-
նինք :»

Եւ անցաւ առաջ : Ան կ'ա-
ռաջնորդէր զուարթօրէն կայտուե-
լով, և երբեմն խօսին կը դառնար
նայելու թէ հոգեւոր հայրը կը
հետեւէր իրեն :

Բարի կրօնաւորը սքանչացած էր տղուն ազնիւ վարմունքին վրայ :

«— Մօտէ՛ս քալէ տեսնենք , քսաւ անոր , ի՞նչ է անունդ .

— Ֆելիքս Բէռէթթի կը կոչուիմ , հա՛յր :

— Քանի՞ տարեկան ես .

— Գրեթէ տասներկու :

— Ինչո՞վ կ'զբաղի ծնողքդ .

— Հայրս հովիւ է մօտակայ գիւղին մէջ :

— Եւ դուն խոզի ձագեր կ'աւրածես .

— Ծնողքս շատ աղքատ է : Ատեն մը ես ոչխարներ կ'աւրածէի , բայց անոնցմէ երկու հատը փախցրնելու համար հիմա միայն խոզի ձագեր կը վտաւիս ինծի , որովհետեւ ասոնք աւելի քիչ վազող կենդանիներ են :

— Ա՛հ , ա՛հ , քու նոր պաշտօնդ շնորհաւորելի չէ՛ . ուրեմն անշուշտ խաղի զբաղած էիր ոչխարներուդ մօլորած պտեն :

— Ի՛նչ , հա՛յր , ես խորհելու զբաղած էի : Շատ անգամ կը պատահի ինծի այդպէս :

— Եւ ի՞նչ բանի վրայ խորհելու զբաղած էիր .

— Հարիւր տեսակ բանի վրայ , ես կը խորհէի թէ ո՛րչափ բան կար որ կրնայի սովորիլ , մինչդեռ բան մը չէի գիտեր :

— Ըսել է կը ցաւիս ուսում չունենալուդ համար :

— Ա՛հ , հա՛յր , եթէ կարելի ըլլար՝ իմ բոլոր մատներս տալու պիտի յօժարէի ուսում առնելու , ձեզի պէս գիտուն ըլլալու համար :

Խօսակցութիւնը տեւեց քանի

մը վայրկեան : Տղան իր ուշիմութեան վրայ ա՛յնչափ լաւ գաղափար ընծայեց կրօնաւորին , որ անիկա անմիջապէս գնաց անոր ծնողքին քով , թոյլտուութիւն ուղեց զայն հետը տանելու և կրթել տալու :

Ծնողքը հաւանեցաւ առանց դժուարութեան : Փելիքս մեկնեցաւ , աշխատեցաւ ա՛յնքան եռանդով , և ուսում առաւ ա՛յնքան լաւ որ մեծ գիտուն մը եղաւ , արժանացաւ իր կրօնական միաբանութեան բոլոր կարգերուն , ապա արքեպիսկոպոս եղաւ , վերջը՝ կարտինալ , և աւելի վերջը եղաւ այն նշանաւոր Պապը , հովուապետը հռովմէական եկեղեցւոյն , որ ճանչցուած է Սիքսթ-Քէնթ անունով :

Ի՞նչ բանէ կախում ունին ճակատագիրները :

Եթէ փոքրիկն Փելիքս Բէռէթթի՝ կրօնաւորին մօտեցած ատեն փոխանակ բարեկիրթ կերպով գլխարկը հանելու և շնորհալի վարուելու , գլուխը գոց կեցած ըլլար , և բաւականանար կարճաւոտ կերպով այո՛ կամ ո՛չ պատասխանելով , ինչպէս որ կ'ընեն շատ տղաքներ , հաւանակա՞ն է որ իր կեանքի ամբողջ տեւողութեանը խոզարած մը մնացած պիտի ըլլար : Կրօնաւորը ճամբան գտնելէ վերջ չպիտի ախորժէր խօսելու հետը , ու չպիտի ճանչնար անոր սրտին փափաքները :

Բարեկրթութիւնը և քաղաքավարութիւնը ծախք չի պահանջեր , բայց կրնայ շատ բան շահեցնել :

Անիկա ա՛յն տեսակ յատկութիւն մըն է՝ որ ունեցողին՝ մի՛շտ բարեկամներ կը շահեցնէ :

Վ. Մ. ԽԱՉԻԿԵԱՆ

ԱՔՍՈՐԱԿԱՆ ԱՂՋՆԱԿԸ

Ե. — ՎԵՐԱԴԱՐՁ

— Անտառին մէջ մնաց ան...
Ժիւլիէն ինձմէ կամաց կը քա-
լէր... ես չուտ եկայ, որովհետեւ
վազեցի...:

Երբ Մայր Մօրէն, այդ միջո-
ցին, գետնայարկը կ'երթար ըմ-
պելի բերելու, Մարթա տասնա-
պետին մօտեցաւ և ըսաւ անոր.

«Ժիւլիէն բանտարկուած է
Գերմանացիներուն հետ...: Քիչ
առաջ չուզեցի ըսել...: Պէտք է
երթալ և ազատել:

— Այո՛, պէտք է երթալ,
պատասխանեց Լուի Մօրէն: Այդ
գործը ինձի կը վերաբերի:

Եւ իրր լուծեան նշան մատը
բերնին տարաւ:

Այդ միջոցին մայր Մօրէն
ձեռքը խնձորօղիի պղտիկ կարաս
մը բռնած վերադարձաւ և ըսաւ
խնդալով:

«Ծիշդ ժամանակին այդ ա-
նիծեալ Գերմանները կծիկը դրին:
Ահաւասիկ խնձորօղիին վերջին
մնացորդը, և խողի իւղ իսկ մնա-
ցած չէ:

— Մի՛ մտաւանջուիր, իմ
քաջարի մայրիկս, յայտարարեց
Լուի Մօրէն ուսերը թօթուելով:
Անհոգ եղիր, պարէն բերելու
պիտի երթամ: Աւերակի վերած-
ուած այս երկրին խեղճ բնակչու-
թեան համար ուտելիք բերած
ենք մեզի հետ:

Յետոյ առիթէն օգտուելով
յարեց:



Ահաւասիկ խնձորօղիին մնացորդը

«Մարթա ինձի հետ թող գայ,
թող իր ամենէն մեծ կողովը իր
հետ առնէ: Քիչ ժամանակէն կը
վերադառնանք և պիտի կրնանք
բերել բան մը, որով կարելի պի-
տի ըլլայ մեզի համար ուտելիք
պատրաստել:

Անմիջապէս որ Լուի Մօրէն
Մարթայի հետ առանձինն մնաց,
հարցուց.

«Ի՞նչ պատմութիւն է այս:
Ի՞նչ ըսել կ'ուզես, հէ՛, Ժիւլիէն
Գերմաններուն հետ բանտարկուած
է ըսելով:»

Այն ատեն փոքրիկ աղախներ,
տասնապետը դէպի Փօնթէն-օ-
Րիզ տանելով հանդերձ, ժամա-
նակ չկորսնցնելու համար պատ-
մեց անոր գետնայարկին եղերա-
կան դէպքը և անձնաւորութիւնը
քաջարի Ժիւլիէնին, որ ինքզինքը
զոհեց իրեն համար:

«Շո՛ւտ, երթանք ազատելու
Ժիւլիէնը, եզրակացուց Մարթա
վճռական շեշտով մը:

Լուի Մօրէն գործունեայ և պաղարիւն մէկն էր։ Ան քսանէ աւելի անգամներ արժանացած էր խաչի պատուանշաններուն և տասնապետի թիկնանշաններուն։

«Քանի՞ հոգի են Գերմանները, հարցուց Լուի Մօրէն։

— Երեք, երկու զինուոր և տեղակալ մը։

— Հաճոյառիթ խաղ մը պիտի ըլլայ այս, ըսաւ տասնապետը խնդալով։ Օ՛ն, հոն երթանք։

Լուի Մօրէն սկսաւ արագ արագ քայլեր առնել. իսկ Մարթա քովն ի վեր գրեթէ կը վազէր։

Յետոյ քանի մը մանրամասնութիւններ եւս հարցուց։

«Հապա՛ բանալի՞ն վանդակադուռը բանալու համար։»

— Իմ քովս է, ըսաւ Մարթա. Ժիւլիէն զայն ինձ նետեց վանդակադրան ծակէն։

Արեւը հորիզոնէն վար իջնելու վրայ էր, բայց իր ճառագայթները բովանդակ անտառը կը լուսաւորէին։

Մարթա անտառներու մէջտեղէն արահետի մը հետեւեցաւ և իսկոյն Փօնթէն-օ-Րիզը նշմարեց։

Տասնապետը պզտիկ աղախիւնին հետեւելով հանդերձ ծառերու ճիւղերուն մէջէն, առաւ իր վեցհարուածը և ապահովուեցաւ թէ լաւ լեցուած է։

«Նախազգացնել պիտի տամ Ժիւլիէնի մեր գալուստը, ըսաւ Մարթա։

— Ի՞նչպէս, հարցուց Լուի Մօրէն։

Իբր պատասխան, պզտիկ աղախիւնը սկսաւ սուլել սարեակի մը պէս և այնքան կատարելու-

թեամբ որ տասնապետը զարմացած մնաց։

«Հիմա մենք զիրար հասկըցանք, ըսաւ Մարթա խնդալով։

Գետնայարկին տակ երեք Գերմանները շատ լաւ աշխատած էին։ Ընդարձակ խոռոչ մը բացած էին վանդակորմին տակ։ Երբեմն տեղակալ Քօթպիւս քրտնած և շնչասպառ ծունկի կուգար և կը ծռէր տեսնելու համար թէ կարելի է անկէ անցնիլ։

Ժիւլիէն, լսելով սարեակի ձայնը և ճանչնալով Մարթայի ձայնը, հանգստացաւ, չդժգոհեցաւ աշխատութեան վերջաւորութենէն որուն ինք ալ մասնակցած էր այնքան եռանդ ցոյց տալով, վերցնելով մեծ հողի զանգուածներ այնքան զարմանք պատճառելով Գերմաններուն։

Տեղակալ Քօթպիւս կը ջանար անգամ մըն ալ իր մեծ գլուխը անցընել վանդակորմին ծակէն, երբ առնական ձայն մը լսուեցաւ գետնատան մօտիկ։ Տասնապետ Մօրէնն էր որ հրամաններ կ'արձակէր, այնպէս որ իբր թէ իր ետին ունէր զինուորական ահագին խուճը մը։

Յետոյ վեց հարուածը ձեռքը, դրան առջև երեւցաւ և ըսաւ.

«Անձնատուր եղէ՛ք, ապա թէ ոչ կը կրակեմ»։

Երկու Գերմանները կասկածելով որ ամէն կողմէ չըջապատուած են, վանդակադրան ետեւէն իրենց ձեռքերը վեր բռնեցին։

Գալով տեղակալ Քօթպիւսի, իր վեցհարուածը ուղղեց բնագլխաբար Ֆրանսացի տասնապետին։ Բայց զէնքը երկար ժամանակ իր

ձեռքին մէջ չի մնաց : Ժիւլիէն տեղակալ Բօթալիւսի դաստակին բռունցքի այնպիսի հարուած մը իջեցուց որ ան սոսկալի աղաղակ մը արձակեց և թողուց որ իր վեցհարուածը վանդակորմէն անդին իյնայ :

Մարթա, անստոյգ և թեթեւ, խլեց զայն և ուղղեց արիաբար խոշոր տեղակալին որ ընդունի թեան անօգուտ ըլլալը ըմբռնելով դէմքի գէշ արտայայտութեամբ մը յայտարարեց .

«Լա'ւ . . . կը յանձնուիմ :»

Գործը ասով չաւարտեցաւ սակայն : Տասնապետ Լուի Մօրէն, առնելով բանալին պղտիկ աղախինին ձեռքէն, բացաւ դուռը իր վեց հարուածը ուղղելով հանդերձ երեք Գերմաններուն միանգամայն :

Բայց ասիկա աւելորդ էր : Արդէն երկու ուղեւորները շատ գոհ էին գերի եղած ըլլալնուն համար, ի սրտէ ուրախանալով որ վերջապէս պիտի կրնային բան մը ուտել :

Տեղակալ Բօթալիւս ևս հագնելով իր համազգեստը զսպեց ինքզինքը առնելու համար արժանավայել երեւոյթ մը, թէպէտ իր մեծ քիթը և մօրուքը ամբողջովին ծածկուած էր հողով և խոտով :

Տողանցքի խուճրը կազմուեցաւ երեք գերիները շրջապատուած Մարթայէ, Ժիւլիէնէ սկսան կարգաւ քալել : Պղտիկ աղախինը միշտ իր ձեռքին մէջ կը բռնէր տեղակալին վեցհարուածը և պըղտիկ Ժիւլիէնն ալ գինուորներէն մէկուն հրացանը առած էր :

Տասնապետ Լուի Մօրէն ևս միւս հրացանը առած էր : Ամէնքը մէկ հաստատ քայլերով սկսան դէպի ագարակ յառաջանալ :

Երբ մայր Մօրէն տեսաւ այս զարմանալի տողանցքին դէպի ամայացած բակը դալը, ձեռքերը երկինք բարձրացուցած ուրախ բացաւ անհոյսութեամբ մը ըսաւ .

— Բայց ո՞ւրկէ բռնեցիք այս թռչունները :

— Ֆօնթէն-Օ-Րիզէն, ըսաւ տասնապետը խնդալով : Մարթա և Ժիւլիէն կրցած էին քանտարկել զանոնք գետնայարկին տակ . ես ալ զանոնք հաւաքեցի : Հիմա զանոնք մինչև Լ . . . քաղաքը պիտի տանինք, ուր իմ սպաս շատ գոհ պիտի մնայ այս փոքրիկ նռէրէն :



Մայր Մօրէն ձեռքերը վեր կը պռույ .
«Բայց ո՞ւրկէ բռնեցիք այս թռչունները .»

Եւ աւելցուց տասնապետը .

«Ուտելիք ալ պիտի կրնանք բերել, որովհետև արդէն սկսայ անօթեմալ :

Իրիկուան մեծ խրախճանութիւն կար Սէն-Պարալի ագարակին մէջ : Սեղանը դրուած էր մառանին մէջ, ծածկոցին վրայ

բուռն և այլայլած սպասները
զարդը կը կազմէին այդ սեղա-
նին. սակայն ճաշը տօնի մը
պապաւորութիւնը կը թողուր:

Մայր Մօրէն տխուր էր սա-
կայն. որովհետեւ իր շուրջը աւե-
րակ միայն մնացած էր և ազա-
րակը կործանած էր. ուստի շատ
անգամ ինքզինքը չկրցաւ արգի-
լել ըսելէ զայրոյթի շեշտով մը.

«Երբ մտածուի թէ՛ այս բար-
բարոսները, վախճանները մինչեւիսկ
իմ երկաթեայ և կկայեկուած
կաթսաները յափշտակեցին... երբ
մտածուի թէ՛ անոնք վայրագա-
բար կտրեցին այն միակ կեռա-
սենին որ կը մնայ...»:

«Մի վշտանար մայրիկ, ազա-
րակը պիտի վերաշինուի, պնակ-
ներ և կաթսաներ պիտի առնուին.
և պիտի վերաւանկուին կեռասե-
նիները:

«Կարեւորը այն է որ Ֆրան-
սա հաստատապէս ինքզինքը վե-
րագտնէ և դաւաճանութիւնները
վերջնականապէս պիտի անհետա-
նան Ֆրանսայէ: Եւ ի վերջոյ
բարբարոսները իրենց պատիժը
պիտի կրեն»:

Տասնապետ Մօրէն իր դա-
ւաթը վերցնելով աւելցուց ու-
րախութեամբ.

«Իսկ հիմա, պիտի խմենք
փոքրիկ արցորական աղջնակին
կենացը:

Վ. Ե. Բ. Զ.

ԿՆՈՒՆԲ. — Անցեալ Կիրակի 13
Յունիս, Գատրգիւղի Հայոց եկեղեցիին
մէջ, կատարուեցաւ Տէր եւ Տիկին Հրանդ
Մանավեանի աղջկան մկրտութիւնը,
կնքահայրութեամբ Տօբթ. Գ. Շահնա-
զարեանի: Նորածինը կոչուեցաւ Տիանա
Արտէմիս:

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԲԱԺԻՆ

ԹԻԻ 39

Միավանկ մ'եմ ձեզ ընտանի,
Ինձմէ ամէն մարդ հատ մ'ունի,
Գըլուխըս դուն եթէ կրտես,
Օհ, երբեք հոգ չեմ ըներ ես,
Զի կը մնամ ես միշտ նոյն բան
Եւ միշտ տէրը նոյն ինքնութեան.
Բայց երբ իմ պոչըս փրցունես
Գիտցի՛ր, ինքզինքդ կը գրտնես.
Օհ, չըսե՛ժ, ինչ եմ ես:

ՕՆՆԻԿ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ՀԱՆԵԼՈՒԿԻ

ԹԻԻ 40

Կ'արտադրուիմ ես հոգէն,
Մարդոց հաճոյքին զոհ եմ
Փաթթեն ճերմակ մի պատանք:
Հուրով կ'ընեն նահապտակ:
Վ. Մ.

ՊԱՏԻՈՅ ՏԱԽՏԱԿ

Թորոսեան վարժարանի (Գատրգիւղ)
մրցական Մայիս վերջի գրաւոր ըննու-
թեանց առաջին հանդիսացած են թուա-
բանութեան մէջ՝ Վահէ Բարեղեան (Ա.
կարգէն) եւ Յարութիւն Բազրճեան (շրը-
ջանաւարտ կարգէն), Ֆրանս. քերակա-
նութեան եւ թուարանութեան մէջ՝ Կա-
րապետ Պատուհասեան (Գ. կարգէն),
հայերէն քերականութեան եւ ֆրանս.
քերականութեան մէջ՝ Շաքէ Թորոսեան
(շրջանաւարտ կարգէն):

Իզմիտի որբանոցին տնօրէնութեան
յայտարարութեան համաձայն, պատուոյ
ցանկին մէջ արձանագրուելու արժանի
հանդիսացած են Մարգարիտ Պետրոս-
եան Տիգրանակերտցի (Բ. կարգէն),
Պերճուհի Սուրեան Պոլսեցի (Գ. կարգէն),
Երանուհի Մաւեան Պարտիզակցի եւ
Կիւլիւնեայ Էսքիպազրեան Ռոտտաթցի
(մանկապարտէզէն):

15րդ թիւ ԱՌԱՒՈՏԻ հանելուկին
լուծումները

Թիւ 33 հանելուկին լուծումն է ԱԹՈՌ, որ է երկու վանկ. Առաջինը Ա, որ է ծայնաւոր, երկրորդ վանկն է ԹՈՌ, մեծ մայրիկին սիրելի. վանկերը երբ իրարու քով գան, կը կազմուի ԱԹՈՌ, որ տուներու մէջ շատ կը գործածուի:

Թիւ 34 հանելուկին լուծումն է ԿԱԹՈՐԻ, որ լացողին հետ լացող է եւ թշուառին հետ գուրգուրացող. Մէջտեղէն երբ կտրուի, կ'ունենանք ԿԱԹ, որ է սննդարար հեղուկ եւ ՈՐԻ, որ է շունչ կենդանարար:

Թիւ 35 հանելուկին լուծումն է ՕՐ, որ ժամանակ կը յայտնէ. զոյգ զոյգ կ'ըլլայ ՕՐՕՐ, որ մայրերուն երգը կը կազմէ մանկիկներուն ուղղեալ:

ԾԱՆՅԹ.— 16րդ թիւ «Առաւօտ»ի հանելուկներուն լուծումը եւ լուծողներուն անունները յառաջիկայ թիւով:

ԼՈՒԾԵՑԻՆ

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎՐԺ. (Սկիւտար)

Բեղրակ էսմէրեան եւ Կարօ Զրովեան 34 եւ 35ը, Սարգիս Պալեան, Պողոս Մելիքեան եւ Լեւոն Քեահեան 35ը. Նուպար Թէրզեան 34 եւ 35ը, Աղեքսանդր Քիրէճեան 33 եւ 35ը:

ԹՈՐՈՍԵԱՆ ՎՐԺ. (Գատրգիւղ Մօտա)

Յարութիւն Բագրճեան, Նշան Գրիգորեան, Մանուշակ Տատրեան, Շաքէ Թորոսեան, Պերճ Թադէոսեան, Պօղոս Մուրատեան, Արամ Օգանեան, Յարութիւն Թազուրեան եւ Գրիգոր Քէհեան 33, 34 եւ 35ը. Զարեհ Շիրինեան 33 եւ 35ը:

ՄԻՆԱՍԵԱՆ ՎՐԺ. (Գումգարու Լանկա)

Վաւմ Զաքարեան, Նուպար Քէօշեան, Մելինէ Փապուճեան, Արտաւազդ Յովսէփեան, Շահանդուխտ Նատուրեան, Կատարինէ Ճամճեան, Հրանտ Գասարեան, Եղուարդ Գուլթէլեան եւ Յակոբ Տաղլարեան 33ը:

ՄԱՅՐ ՎԱՐԺԱՐԱՆ

Տիրուհի Ապագեան, Էօժէնի Գասպեան, Բերրոնէ Պէսիմեան 33, 34 եւ 35ը. Արշալոյս Դանիէլեան, Մառի եւ Վալանթին Զատիկեան 30, 33, 34 եւ 35ը:

Ռ. ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎՐԺ. (Կէտիկ Փաշա)

Զարեհ Ժամկոչեան, Շաւարշ Կելմիշկէրտանեան եւ Հրանտ Թօփաքեան 33, 34 եւ 35ը. Տիգրանուհի Գէորգեան 33ը. Գեղամ Սեթեան, Հայկ Սարաֆեան, Սուրէն եւ Մաքրուհի Տէր Գրիգորեան 33 եւ 35ը:

ԱՐԱՄԵԱՆ ՎՐԺ. (Գատրգիւղ)

Թօկօ Աճէմեան, Խաչիկ Փափագեան եւ Ժիրայր Սաքաեան 33 եւ 35ը:

ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ (Եէնի Գարու)

Սօֆի Սահակեան 33ը, Էօժէնի Միքայէլեան 35ը:

ՌՈՊԷՐԹ ԳՕԼԷՃԷՆ

Ժօրժ Գարա եռսուփեան 31, 32 եւ 33ը. Գրիգոր Ս. Գարապաճեան 33 եւ 35ը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ (Գումգարու)

Մելինէ Պէկեան 33, 34 եւ 35ը. Արմենուհի Եռսուփեան, Արուսեակ Գուրպէթեան, Հայկուհի Մարաշլեան, Հերմինէ Ասլանեան, Յովհաննէս եւ Նուարդ Զարպհանէլեան, Սիրանոյշ Մինասեան, Էօժէնի Գարիպեան եւ Էօժէնի Սազըղլեան 33 եւ 35ը:

ԱՄԵՐԻԿԱՆ ՎՐԺ. (Կէտիկ Փաշա)

Միհրան Պէզժեան եւ Արշակ Տիմիճեան 33 եւ 35ը:

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎՐԺ. (Բերա)

Օննիկ Ա. Տէր Աբրահամեան:

ԼՈՒԾԵՑԻՆ ՆԱԵԻ՝

Վերգինէ Միսաքեան 33, 34 եւ 35ը. Միլթոն Մէլիքեան 33ը. Միհրան Պճիկեան 35ը. Համբարձում Մազմանեան եւ Եղուարդ Զահրէճեան 33 եւ 35ը. Պերճուհի Սուրեան եւ Նուարդ Իշխանեան 33 եւ 35ը:

ՆՈՒԻՐԱՑՈՒՈՒԹԻՒՆ

Տիար Կոպեռնիկ Խաչատուրեան 3 օրինակ «Առաւօտ» հանդէս կը նուիրէ Արնաուտգիւղի Հայանուէր, Արնաուտգիւղի Արմաշականներու եւ Օրթագիւղի աղջկանց որբանոցներուն:

Գասրգիւղցիներուն համար

Թապէլայի նկարիչ

ԳՐԻԳՈՐ ԹԱԳԻՈՐԵԱՆ

մաքուր եւ աժան

Հասցէ.— Հայ Եկեղեցւոյ փողոցը

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՏԱՊԱՐԱՀԱՆԴԻՍ

ՅԼՈՒԹՅՈՒՆ ՄԷՋ

Յառաջիկայ 27 Յունիս, Կիրակի օր «ՔՆԱՐ» ֆանձաւոր կը մասնակցի Մուտք՝ 10, իսկ տղայոց 5 Դր2:

آراود
باب عالی جاده سی و سوم ۳۴

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳԱԻԱՌ**

Տարեկան (40 թիւ) 120 Դան.

Վեցամսեայ (20 ») 60 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան (40 ») 20 Գրանի

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. — Առաւօս գրական և գիտական շաբաթաթերթին հասցէն է՝ Պապը Ալի, Բ. Դրան ճիշդ գիմացը թիւ 43 :

Ա. Կ. Ն. Ա. Բ. Ո. Յ. Ժ. ՏԲԹ. Մ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ

Հասցէ՝ Պահճէ Գաբու, Իքի Բարուլու դեղարանը, կէսօրէ վերջ:

ՏԲԹ. ՆԵՐՍԷՍ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ՝ ականջի, քիթի եւ կոկորդի հիւանդութեանց

Պահճէ Գաբու, Համիտիէ թիւրպէսիի դէմ: Աքիկ Իւթիւժեան դեղարանի վեճ նայարկը:

ՏԿԱՐԱԿԱԶՄՆԵՐՈՒՆ ԱԶԳԸ ԼՈՅՍ ԳՆԷ ԱՆՊԱՏՃԱՌ DYNAMOGÉNE

ՈՒԺԱԾԻՆԸ

անուն գինին, որ ուժ եւ առողջութիւն կուտայ Պատրաստութիւն դեղ. Վահան Պէրպէրեանի նուրը Օսման:

ՏԲԹ. ԱՐԹԻՆ ՊԷՅ ՏԵՎԼԵԹԵԱՆ

Նախկին վիրաբուժապետ Հայտար Փաշայի զին. հիւանդանոցին

եւ մասնագէտ միզանցքի, ֆրանկախտի ու մորթային հիւանդութեանց

Գիտական ամենավերջին մէթոտով, դեղերով եւ ներարկումներով քիչ ժամանակի մէջ առանց ցաւի կը բուժէ վերքեր եւ ախտեր: Կը գտնուի ամէն օր բացի Կիրակիէ, Գաբաթէօյ, Ագլ. Փօսթին դիմաց Հին Վոյվոտայ թիւ 3 Թէմրէի եւ միջուն բունի մասնաւոր դարմանում

ՊԻԻՔԱՍԷՐԹԻՆ

BUCCASEPTINE

Այս էլիքսիրը կը յանձնարարուի իբրեւ ազդու հականեխիչ եւ դարման բերնի բորբոքումներու, ակռայի ցաւերու, լինտերու հիւանդութեանց եւ բերնի զարշահոտութեան, ծայնի մարելուն, ամէն տեսակ հարբուխներու, չոր հազերու, ակռաները մաքրելու եւ ճերմկցնելու:

ՔՐԷՍ ՍԱՐՔՕՓԹԻՍԻՏ

CRÈME SARCOPTICIDE

Միակ դարման բորոտութեան, որ երեք օրէն կատարելապէս կը բուժէ հին եւ նոր բորոտութիւնը:

Այս երկու դեղերուն, որոնց հայթայթիչը եւ պատրաստողն է Վահան Պէրպէրեան, կեդրոնատեղին կը գտնուի Պոլիս, Նուրը Յովանիէ ճատտէսի, Օսմ. Կեդր. Դեղարանը, թիւ 48:

ԿՕՇԻԿ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ

Պոլիս, Բարմար գաբու, Մաբասնըլար, թիւ 33 վաճառատան մէջ նոր ժամանած ամերիկեան եւ անգլիական կօշիկներ սկսան վաճառուիլ, արանց 400, կանանց 350 եւ տղայոց 300 դրուշէն: Կը շինուին նաեւ չափու վրայ կօշիկներ, տոկուն եւ ծեւաւոր:

Տպագր. «Առաւօս» Մ. ՍՈՒՐԵԱՆ